

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/2

23 հունիսի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Տիգրան Մանուկյանի 13.05.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 27.04.2015 թ-ի թիվ 655 որոշման դեմ:

Քաղաքացի Տիգրան Մանուկյանի բողոքում բերված փաստարկները.

Տիգրան Մանուկյանը (այսուհետ նաև բողոքաբեր) հայտնում է, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող 1998 թ-ի արտադրության Մերսեդես ՄԼ-320 մակնիշի ավտոմեքենան վաճառել է 500.000 դրամով քաղաքացի Գոռ Խաչիրյանին 2014 թ-ի սեպտեմբերի 4-ին: Ընդ որում, վաճառել է շատ հապճեպ, առաջին իսկ գնորդին, քանի որ ունեցել է ֆինանսական դժվարություններ՝ կապված դատեր ուսման վարձի հետ:

Որոշ ժամանակ անց՝ 27.03.2015 թ-ին, ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության հատուկ հանձնարարությունների բաժնի կողմից ուղարկվել է ծանուցում, որի համաձայն վաճառքից իր մոտ առաջացել է հարկային պարտավորություններ: Բողոքաբերը այցելել է հարկային մարմնի Խորենացի 3 հասցեում գտնվող մասնաշենք, որտեղ ներկայացրել է գրավոր տեղեկանք այն մասին, որ վերը նշված ավտոմեքենան վաճառել է 500.000 դրամով:

Բողոքաբերը պատրաստ է եղել վճարել նշված ավտոմեքենայի վաճառքի առաջացած հարկային պարտավորությունները և սույն թվականի մայիսի 11-ին այցելել է Կենտրոնի ՀՏ և ներկայացրել հաշվետվություն: Սակայն Կենտրոնի ՀՏ սպասարկման սրահի աշխատակիցը մերժել է ներկայացվող հաշվետվության ընդունումը՝ պատճառաբանելով, որ հաշվետվության տվյալները պետք է վերանայվեն: Հակառակ դեպքում կշարունակվեն օրական տույժերի և տուգանքների հաշվարկը:

Այլընտրանք չունենալով բողոքաբերը ստիպված ճշգրտել է ներկայացված հաշվետվությունը: Արդյունքում բողոքաբերի հարկային պարտավորությունները աճել են մոտ հինգ անգամ՝ կազմելով մոտ 640.000 դրամ:

Բողոքաբերը չի հրաժարվում մուծել իրեն հասանելիք հարկային պարտավորությունները, չնայած որ չի աշխատում և ունի բազմաթիվ ֆինանսական դժվարություններ:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է հարցին տալ դրական լուծում:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետը, քննարկելով քաղաքացի Տիգրան Մանուկյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 05.05.2015 թ-ի դրությամբ նրա չկատարած հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմում են 631.347 դրամ: Պարտավորությունը առաջացել է 2014 թ-ի 3-րդ եռամսյակի հաշվարկից, որը ենթակա է գանձման:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի կողմից 27.04.2015 թ-ին ընդունվել է թիվ 655 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Տիգրան Մանուկյանից 631.347 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ Որոշմամբ քաղաքացի Տիգրան Մանուկյանից 631.347 դրամ ԱԱՀ-ի գումար գանձման առաջադրելու համար հիմք են ընդունվել հետևյալ փաստական հանգամանքները:

Քաղաքացի Տիգրան Մանուկյան (վաճառող) և Անդրանիկ Ալթունյանի (գնորդ) միջև 18.03.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Տիգրան Մանուկյանը Անդրանիկ Ալթունյանին է վաճառել «Kia Sorento 3.5» մակնիշի 2003 թ-ի թողարկման տարեթվի ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն «Kia Sorento 3.5» մակնիշի ավտոմեքենան Տիգրան Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանել է (ձեռք է բերվել) 22.04.2013 թ-ից:

Այնուհետև, Տիգրան Մանուկյանի (վաճառող) և Գոռ Խանջիրյանի (գնորդ) միջև 04.09.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Տիգրան Մանուկյանը Գոռ Խանջիրյանին է վաճառել «Mercedes-Benz ML 320» մակնիշի 1998 թ-ի թողարկման տարեթվի ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն վաճառվող «Mercedes-Benz ML 320» մակնիշի ավտոմեքենան Կարեն Ղանդիլյանին սեփականության իրավունքով պատկանել է (ձեռք է բերվել) 18.03.2014 թ-ից:

Քննարկվող դեպքում քաղաքացի Տիգրան Մանուկյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Տիգրան Մանուկյանի կողմից 11.05.2015 թ-ին ներկայացվել է ԱԱՀ-ի հաշվարկ, որում շրջանառությունը կազմել է 1.948.213 դրամ, վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը՝ 324.767 դրամ: Այնուհետև, 14.05.2015 թ-ին Տիգրան Մանուկյանի կողմից փոստային ծառայության միջոցով ուղարկվել է ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ, որում շրջանառությունն արտացոլվել է 500.000 դրամ, ԱԱՀ-ի գումարը՝ 83.350 դրամ:

Տվյալ դեպքում Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորության հաշվարկման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Տիգրան Մանուկյանի կողմից վաճառված «Mercedes-Benz ML 320» մակնիշի մեքենայի վաճառքի գինն ընդունվել է ոչ թե 04.09.2014 թ-ի «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի» 2-րդ կետով սահմանված տրանսպորտային միջոցի վաճառքի գինը՝ 500.000 դրամը, այլ, ըստ էության՝ անուղղակի եղանակով որոշված գինը, որը ձևավորվել է «Mercedes-Benz ML 320» մակնիշի 1998 թ-ի թողարկման տարեթվի ավտոմեքենաների շուկայական արժեքների համադրման արդյունքում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 27.04.2015 թ-ի թիվ 655 որոշման կազմման պայմաններում Տիգրան Մանուկյանի համար առկա են ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ, հետևապես Որոշմամբ գանձման առաջադրված հարկային պարտավորության հիմնավոր լինելու ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Սույն գործում առկա է Տիգրան Մանուկյանի և Գոռ Խանչիրյանի միջև 04.09.2014 թ-ին կնքված «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրը», որի համաձայն (Պայմանագրի 2-րդ կետ) Տիգրան Մանուկյանը «Mercedes-Benz ML 320» մակնիշի 1998 թ-ի թողարկման տարեթվի ավտոմեքենան Գոռ Խանչիրյանին է վաճառել 500.000 դրամով: Միևնույն ժամանակ, Գոռ Խանչիրյանը ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում 20.04.2015 թ-ին տվել է գրավոր բացատրություն, որում Գոռ Խանչիրյանը մասնավորապես նշել է, որ վերոգրյալ մեքենան Տիգրան Մանուկյանից գնել է 500.000 դրամով:

Վերոգրյալ թվով երկու ապացույցներից բացի այլ ապացույց, որով կհիմնավորվեր «Mercedes-Benz ML 320» մակնիշի ավտոմեքենան Տիգրան Մանուկյանի կողմից 500.000 դրամից ավելի բարձր գնով վաճառված լինելու հանգամանքը, սույն գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, որի համաձայն. «Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել», Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում հիմնավոր է համարվում Տիգրան Մանուկյանի կողմից «Mercedes-Benz ML 320» մակնիշի ավտոմեքենան 500.000 դրամով վաճառված լինելու հանգամանքը: Հետևապես, նշված ավտոմեքենայի վաճառքից առաջացող ԱԱՀ-ի գումարը որոշելու համար պետք է հիմք ընդունվի Տիգրան Մանուկյանի և Գոռ Խանչիրյանի միջև 04.09.2014 թ-ին կնքված «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի» 2-րդ կետում արտացոլված տրանսպորտային միջոցի վաճառքի գինը՝ 500.000 դրամը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Մանուկյանի կողմից ներկայացվել է ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ, որում արտացոլվել է վերոգրյալ տրանսպորտային միջոցի վաճառքից առաջացած ԱԱՀ-ի գումարը (որն արդեն իսկ վճարված է), ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով, Տիգրան Մանուկյանի բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 27.04.2015 թ-ի թիվ 655 որոշումը:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝


Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ